*պահպանել զթանկագին կեանս սիրեցեալ Միապետին և բարեպաշտ Կայսրուհւոյ և պարգևել խաղաղութիւն ի փառս Քրիստոնէութեան։*

Մկրտիչ Կաթողիկոս ամենայն Հայոց.

*Էջմիածին.* 14 *մայիսի.*

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## Ա.

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ ՀԱՅՐԱՊԵՏԻ

### Հայրապետական տնօրէնութիւնք.

*Կոնդակ յանուն միաբանից Ս. Ստեփաննոսի անապատին Կուսանաց Տփխեաց, որով հաստատեցաւ կոյս Յեփրոսինէ Արամելիքեան՝ Մայրապետ կուսանաց անապատին։* Թ. 292. *մարտ* 31։

— *Յանուն Փոխանորդի վիճակին Կարուց, ընդ որում դարձուցանելով զգործ Հոգևոր կառավարութեան տեղւոյն յաղագս լուծման պսակի Եղանի Աւետիսեան ընդ առն Գալուստի Մկրտչեան, մերժեցաւ խնդիր լուծման պսակին.* Թ. 309. *ապրիլ* 8։

— *Յանուն վիճակ. Ատենին Վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ յայտնել Տ. Բարգէն վարդապետի՝ գալ ի Մայր Աթոռ իբրև ազատ ի պաշտամանէ Փոխանորդին Ախալցխոյ։* Թ. 319. *ապրիլ* 10։

— *Յանուն Առաջնորդին Հայոց Աստրախանի Տ. Արիստակէս Արքեպիսկոպոսի, որով յայտնեցաւ ի գիտութիւն,*

*եթէ բարձրագոյն թոյլատրեալ է նմա խնդրեալն եռամսեայ արձակուրդ յարտասահման։ Թ. 317. ապրիլ 10։*

---

### Բ.

*Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք։*

*Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան յանուն Ս. Փրկչեան ազգ. հիւանդանոցի Կ. Պօլսոյ՝ վասն յղելոյ զերկոտասան համառօտ և զվեց ընդարձակ օրացոյցս։ Թ. 291։*

*— Օրհնութեան և գոհունակութեան յանուն բնակչի Վերին Ագա գեղջ Գողթան գաւառի պ. Թադէոսի Մելիք—Բաբայեանց՝ վասն նուիրաբերելոյ նորա զ50 ռ. ի յիշատակ հանգուցեալ հօրն իւրոյ Յովհաննիսի։*

***

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

*Մայիսի ընթացքում Սինոդը թոյլատրեց եօթներորդ աստիճանի ազգակցութեան հետեւեալ պսակները.—*

*Շուշուայ գաւառի Խնելեցիկ գիւղի բնակիչ Ներսէս Աւանէսեան Բալասանեանի՝ Նաշխուն Գրիգորեանի հետ, Ղարաքլիսայի բնակիչ Ռուստամ Մկրտչեանի՝ Բերսաբէ Աբրահամեանի հետ և Նովրուզ գիւղացի Վարդան Նազարեանի՝ Նրմնիա Եփրեմեանի հետ։*

*Ապրիլի 5-ին Սինոդը որոշեց — հրամայել Երեւանի կոնսիստորիային, որ Թարգմանի Ախլաթեան գիւղի ծխատէր Պօղոս քհնյ. Տէր Ղազարեանի մասին եղած գործը անչափահաս Նազանի Առաքելեանի պսակի մասին և ուղարկի Սիսեանի քննիչին, որն արդէն ձեռնարկել է յիշեալ գործի քննութեան Սինոդի Սեպտեմբերի 19-ին կայացրած որոշման համաձայն։*